ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,հեռ.՝ (+374 11)514 200, ֆաքս (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

№ 01/61-17672 « 27 » 07 2021թ.

Հմայակ Վարդանյան Գեղեցիկի Ա/Ձ-ին
ք. Երևան, Էրեբունի թաղ., Ռոստովյան փ., 21/22

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և Հմայակ Վարդանյան Գեղեցիկի Ա/Ձ-ի /այսուհետ՝ Ընկերություն/ միջև 14.05.2021 թվականին կնքված «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-21/2-2» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Պայմանագրի 8.15 կետով սահմանված պայմանագրով նախատեսված պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնող Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող մանկապարտեզները էլեկտրոնային փոստի միջոցով բազմիցս դիմել են Ընկերությանը՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը /խտացրած կաթ/ մատակարարելու համար, սակայն համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել, Ընկերությունը չի մատակարարում պայմանագրով նախատեսված ապրանքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.
Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի:

Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը սահմանող թիվ 1 հավելվածով սահմանվում է, որ «Մատակարարումն իրականացվում է առնվազն ամիսը երկու անգամ: Մատակարարման կոնկրետ օրը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ շուտ քան 3 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսազանգով:»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համարելով այն լուծված, պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 4.2 և հավելված 5.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն «Յունիբանկ» ՓԲԸ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները (1564000 ՀՀ դրամ և 2345500 ՀՀ դրամ) Երևանի քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ընկերությանը, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, Ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Կատարող՝ Է. Կիրակոսյան
011 514-129